ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

. Երևան 27.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/55

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով Խաչպար» ՍՊԸ-ի 07.04.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից աստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և ահանջը.</u>**

«Խաչպար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 07.04.2018թ. ներկայացրած ողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ-ն 2018թ. մարտի 30-ի թիվ 1 որոշմամբ հաստատել է ՀՀ ՊՆ-ի կարիքների ամար թվով 1 անվանումով «Վիրաբուժական թելերի» ձեռքբերման նպատակով այտարարված հրավերը, թիվ 1 չափաբաժնի մասով «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԵՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» Հավելված թիվ 1-ի «տեխնիկական հատկանիշներ» ունակում նշել է ասեղի համաձուլվածքը կոնկրետ մետաղների և տոկոսների տվյալներով՝ համաձուլվածքն ունի հետևյալ մետաղական կազմը՝ համապատասխան տոկոսային արաբերակցությամբ՝ երկաթ ոչ ավել 73%, քրոմ ոչ պակաս 12%, նիկել ոչ պակաս 10%, ոլիբդեն ոչ պակաս 3%, տիտան և տանտալ ոչ պակաս 2%»:

Հրավերով պահանջվող այդ տվյալները հանդիսանում են «էտալոյ» անվանումով համաձուլվածքի կոնկրետ նույնականացնող տվյալները, որի մասին ՀՀ ՊՆ-ն նշում էր նախորդ տարիներին հայտարարված նմանատիպ ապրանքների հրավերների վիրաբուժական կարանյութերի չափաբաժինների համապատասխան «տեխնիկական հատկանիշներ» սյունակներում՝ գրելով «համաձուլվածքը «էտալոյ» կամ համարժեք»:

Գնման առարկաների բնութագրերը նման ձևով կազմելով՝ ՀՀ ՊՆ-ն չհիմնավորված խոչընդոտներ է առաջացնում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար, հավասար պայմաններ չի ապահովում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար, չի նպաստում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և չի խրախուսում նրանց միջև մրցակցությունը՝ հակասելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին:

«Խաչպար» ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ ՀՀ ՊՆ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2018թ. մարտի 30-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ «Վիրաբուժական թելերի» ձեռքբերման նպատակով հայտարարված բաց մրցույթի հրավերը թիվ 1 չափաբաժնի մասով, և դիմելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրում է՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝ պարտավորեցնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու բաց մրցույթի ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում՝ հրավերի թիվ 1 չափաբաժնի մասով, և փոփոխելու հրավերի թիվ 1 չափաբաժնի «տեխնիկական հատկանիշներ» սյունակում առկա պահանջները՝ այնտեղից հեռացնելով ներառված կոնկրետ մետաղների և տոկոսների տվյալները, որոնք խտրական են, չհիմնավորված խոչընդոտներ են առաջացնում գնումների գործընթացում մրցակցության համար, հավասար պայմաններ չեն ապահովում հնարավոր բոլոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար, չեն նպաստում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և նրանց միջև մրցակցության խրախուսմանը»:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն Սմբատ Բալասանյանը:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 19.04.2018թ. թիվ ԴՎԱ/1361 գրությամբ Խորհրդին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Վիրաբուժական կարանյութերի ասեղները կազմում են կարանյութի անբաժան մասը և նրա որակական հատկություններն ուղղակիորեն անդրադառնում են ամբողջական կարանյութի որակին: Ասեղների որակը մեծապես կախված է համաձուլվածքում առկա մետաղների տեսակներից և համաձուլվածքում վերջիններիս չափաքանակներից, ուստի վիրաբուժական բարդ միջամտությունների համար անհրաժեշտ կարանյութերի տեխնիկական բնութագրերում համաձուլվածքին վերաբերվող պահանջներ ներառվել են միայն որակյալ կարանյութեր ձեռք բերելու անհրաժեշտությունից ելնելով, միաժամանակ՝ մրցույթի հրավերով տվյալ պահանջը չներառելը մասնակիցներին հնարավորություն կընձեռներ ՀՀ պաշտպանության նախարարությանն առաջարկել այնպիսի կարանյութեր, որոնց ասեղը շուտ է բթանում և դրանք կայուն չեն անդառնալի դեֆորմացիայի հանդեպ՝ ասեղնաբռնիչով աշխատելիս, իսկ նշված դեպքերում վիրաբուժական կարանյութն անհնար է օգտագործել ամբողջությամբ և անհրաժեշտություն է առաջանում վիրահատության ժամանակ փոխել կարանյութը, որը բացի ֆինանսական լրացուցիչ ծախսերից բերում է նաև վիրահատության ժամանակի ավելացման, հյուսվածքների լրացուցիչ տրավմատիզացիայի և հետվիրահատական շրջանի երկարացման:

Վիրաբուժական կարանյութերի տեխնիկական բնութագրերում կարանյութերի ասեղների նման համաձուլվածք սահմանելու համար հիմք են հանդիսացել ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական հաստատությունների կողմից իրականացվող վիրահատությունների յուրահատկությունները (պատերազմական իրավիճակներում հանդիպող վնասվածքների սպեցիֆիկությունը) և բազմամյա հարուստ փորձը: Բացի այդ, ուսումնասիրվել են բազմաթիվ գիտական հետազոտությունների արդյունքները, հաշվի են առնվել համաշխարհային և հայաստանյան առաջադեմ կլինիկաների փորձը և եզրակացությունները, ինչպես նաև ԱՄՆ Վիրջինիա նահանգի մեխանիկայի և տիեզերական տեխնոլոգիաների ֆակուլտետի և վիրաբուժական համալսարանի համատեղ ուսումնասիրությունները՝ վիրաբուժական կարանյութերի ասեղների վերաբերյալ: Բացի այդ մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրով մետաղների չափաքանակները

սահմանվել են որոշակի միջակայքով, այլ ոչ հաստատուն մեծություններով, ինչը մասնակիցներին հնարավորություն է տալիս ՀՀ պաշտպանության նախարարությանն առաջարկել ոչ թե սահմանափակ, այլ որակյալ ասեղներով կարանյութերի առավելագույնս լայն տեսականի:

Ստորև ներկայացնում եմ վիրաբուժական կարանյութերի ասեղների համաձուլվածքում նշված մետաղական կազմի բաղկացուցիչների նշանակությունը համաձուլվածքում՝

Համաձուլվածքում առկա նյութի անվանումը	%	Ընդունելի սահմանաչափ	Նյութի առկայության արդյունքը՝ ասեղի որակական հատկանիշների վրա
Երկաթ	73	ոչ ավել	Հանդիսանում է կապակցող նյութ և նախատեսված մնացորդային ծավալը վերականգնելու համար: Նշվածից ավել քանակությունը նվազեցնում է համաձուլվածքի կայունությունը կոռոզիային հանդեպ
Քրոմ	12	ոչ պակաս	Նպաստում է կոռոզիակայունությանը և ամրությանը
Նիկել	10	ոչ պակաս	Նպաստում է կոռոզիակայունությանը և ամրությանը: Համաձուլվածքը դառնում է մարտենսիտե
Մոլիբդեն	3	ոչ պակաս	Նպաստում է առաձգականությանը, ձգման նկատմամբ ամրությանը, Համաձուլվածքը դառնում է մարտենսիտ
Տիտան, Տանտալ	2	ոչ պակաս	Տիտանը- ամրություն, խտություն, կոռոզիակայունություն:
			Տանտալը - կտրող եզրերի սրություն

Հայտնում եմ նաև, որ վիրաբուժական կարանյութեր արտադրող բոլոր կազմակերպությունները՝ պահանջարկից կախված, կարող են նույն կարանյութը արտադրել որակական էապես տարբերվող և տարբեր մետաղական կազմ ունեցող համաձուլվածքներից կազմված ասեղներով, ինչն էլ իր հերթին հանգեցնում է կարանյութերի գների էական տարբերության և ըստ էության տվյալ պարագայում հնարավոր չէ կարանյութերի գների էական տարբերության դեպքում ստանալ որակական միևնույն ցուցանիշները:

Հարկ եմ համարում նշել նաև, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան ասեղներով կարանյութեր արտադրում են համաշխարհային ճանաչված

այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են «Johnson & Johnson», «CP medical», «Covidien», «Demetech» և այլ ընկերություններ: Ավելին, վերջիններիս կողմից արտադրված վիրաբուժական կարանյութերը ՀՀ ներմուծվում են տեղական բազմաթիվ կազմակերպությունների կողմից, ինչն էլ իր հերթին ապահովում է մրցակցության բարձր մակարդակ, հետևաբար՝ տեխնիկական բնութագրերը նման բովանդակությամբ հրապարակելն ունի բացառապես որակյալ արտադրանք ձեռք բերելու նպատակ»:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ ՊՆ լիազորված ներկայացուցիչ Նորայր Հարությունյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2018/55 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 07.04.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 19.04.2018թ. թիվ ԴՎԱ/1361 գրությամբ Խորհրդին ներկայացված դիրքորոշումը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ի լրումն Բողոքի 13.04.2018թ. ներկայացրած գրությունը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը վիրաբուժական թելերի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի Հրավերի մաս կազմող Պայմանագրի նախագծի Հավելված 1-ով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը սահմանվել են հետևյալ բովանդակությամբ.

«Սինթետիկ չներծծվող մոնոֆիլամենտ վիրաբուժական կարանյութ պատրաստված պոլիպրոպիլենից 2-0. Թելը ներկված է երկնագույն կամ այլ կոնտրաստային գույնի վերքի մեջ լավագույն տեսանելիություն ապահովելու համար: Ասեղը կոռոզիակայուն բարձր ամրության համաձուլվածքն ունի հետևյալ մետաղական կազմը՝ համապատասխան տոկոսային հարաբերակցությամբ՝ երկաթ ոչ ավել 73%, քրոմ ոչ պակաս 12%, նիկել ոչ պակաս 10%, մոլիբդեն ոչ պակաս 3%, տիտան և տանտալ ոչ պակաս 2%: Համաձուլվածքը պատված է սիլիկոնով, որը նվազեցնում է շփումը հյուսվածքների և ասեղի միջև: Ասեղի նյութերը և կառուցվածքը ապահովում են բարձր կայունություն անդարձելի դեֆորմացիայի նկատմամբ՝ ոչ պակաս քան 4,6 Ն/սմ, որը կանխում է ասեղի փոխելու

անհրաժեշտությունը: Թելի միացումը ատրավմատիկ ասեղին ամուր է, ասեղի տրամագիծը թելին միացման մասում ոչ ավել քան 1,15 անգամ, որի շնորհիվ նվազում է հյուսվածքների տրավմատիզացիան ասեղի անցնելու ժամանակ: Ասեղի և թելի տրամագծի մինիմալ տարբերությունը ապահովվում է լազերային գայլիկոնման կամ այլ մեթոդով: Եզակի անհատական ստերիլ փաթեթավորում, որը հնարավորություն է տալիս հասնելու ներքին ներդիրին մեկ շարժման միջոցով: Ներքին միջադիրը պաշտպանում է թելը և ասեղը վնասվելուց (պլաստիկ կամ այլ ամուր նյութ), ապահովում է թելի գծայնությունը տուփից հանելուց հետո կանխելով "ձևի հիշողության" էֆֆեկտի առաջացումը, պարունակում է ամբողջական ինֆորմացիա թելի անվանման բաղադրության, պարամետրերի ինչպես նաև ասեղի պարամետրերի վերաբերյալ, որը հնարավորություն է տալիս վերահսկել պարունակությունը անհատական տուփից հանելուց և ստերիլ վիրահատական սեղանի վրա դնելուց հետո: Ասեղը ծակող՝ 31 +/- 1 մմ, թելի երկարությունը՝ ոչ պակաս 75 սմ»:

«Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի գնման առարկայի մասով Պատվիրատուի կողմից սահմանվել են ձեռքբերվող ապրանքի այնպիսի տվյալներ, որոնք հանդիսանում են վիրաբուժական կարանյութերի ասեղների «էտալոյ» անվանումով համաձուլվածքի կոնկրետ նույնականացնող տվյալներ: Վերը նշված փաստը բողոքաբերի կողմից որակվել է որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ նաև Օրենք) արգելված հղում՝ կոնկրետ անվանումով համաձուլվածքին բնորոշ՝ բաղադրիչների տոկոսային հարաբերակցությանը, որը տարբերվում է վիրաբուժական կարանյութերի այլ անվանումների բաղադրության մեջ մտնող մետաղների տոկոսային հարաբերակցությունից: Բողոքաբերի կարծիքով, Պատվիրատուի կողմից գնման առարկաների բնութագրերի նման սահմանումը անհավասար պայմաններ է ստեղծում Ընթացակարգի հնարավոր մասնակիցների համար, ինչը չի նպաստում վերջիններիս շրջանակի ընդլայնմանը և նրանց միջև մրցակցության խրախուսմանը՝ ուղղակիորեն հակասելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին:

Որպես բերված փաստարկների ապացույց՝ «Խաչպար» ՍՊԸ-ն խորհրդին ներկայացրեց իր կողմից կազմված՝ Հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված վիրաբուժական կարանյութերի ասեղների կազմի մեջ մտնող և ալ արտադրողների կողմից արտադրված ասեղների համաձուլվածքների կոմպոնենտների տոկոսների համեմատական աղյուսակը:

Խորհրդում 05.04.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց, որ բողոքաբերը պատշաճ չի հիմնավորել այն փաստարկը, որ Հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված՝ վիրաբուժական կարանյութերի ասեղների կազմում առկա մետաղների տոկոսային հարաբերակցությունը խտրական է և վերաբերում է կոնկրետ մեկ արտադրողի կողմից արտադրված ապրանքի անվանմանը, քանի որ դրանում նշված են պարունակվող մետաղների տոկոսների նվազագույն և առավելագույն սահմանաչափերը, այլ ոչ թե դրանց տոկոսների կոնկրետ թվային մեծություններ: Բացի այդ, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ վիրաբուժական կարանյութեր արտադրող ընկերությունները՝ պահանջարկից կախված, կարող են նույն կարանյութը արտադրել տարբեր մետաղական կազմ ունեցող համաձուլվածքներից կազմված ասեղներով, ինչն էլ իր հերթին հանգեցնում է կարանյութերի որակի և գների էական տարբերության: Ընդ որում, ասեղների կազմի մեջ մտնող յուրաքանչյուր կոմպոնենտ «պատասխանատու» է ասեղի համապատասխան հատկության ապահովման համար, օրինակ. համաձուլվածքում պարունակվող երկաթը հանդիսանում է կապակցող նյութ և նախատեսված է մնացորդային ծավալը վերականգնելու համար, նիկելը նպաստում է կոռոզիակայունությանը և ամրությանը, և այլն: Ուստի, համաձուլվածքում առկա յուրաքանչյուր բաղադրիչի տոկոսային բանաձևի փոփոխման հետ էապես փոփոխվում են ապրանքի որակական հատկանիշները: Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց նաև, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան ասեղներով կարանյութեր ներկայումս արտադրվում են մի շարք համաշխարհային ճանաչված կազմակերպությունների կողմից, իսկ Պատվիրատուի կողմից տեխնիկական բնութագրերի նման սահմանումը պայմանավորված է բացառապես որակյալ արտադրանք ձեռք բերելու նպատակով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:
- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

- 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

- 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Խորհուրդն արձանագրում է, որ հրավերով պահանջվող՝ գնման ենթակա վիրաբուժական կարանյութերի ասեղների համաձուլվածքներում նշված են պարունակվող

մետաղների տոկոսների նվազագույն և առավելագույն սահմանաչափերը (միջակայքերը), և նշված չեն տոկոսների կոնկրետ թվային մեծություններ:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից չհիմնավորվեց և չապացուցվեց այն հանգամանքը, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ գնման ենթակա վիրաբուժական կարանյութերի ասեղների համաձուլվածքներում առկա մետաղների տոկոսային հարաբերակցությունը հանդիպում է բացառապես «Էտալոյ» անվանումով ապրանքատեսակի մոտ և չի հանդիպում որևէ այլ անվանումով վիրաբուժական կարանյութերում:

Խորհուրդը գտնում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ գնման ենթակա ապրանքների հատկանիշները նկարագրված են սպառիչ և ամբողջական, չեն պարունակում Օրենքի իմաստով հղումներ՝ նշումներ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի կամ կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի վերաբերյալ, Պատվիրատուի կողմից հիմնավորված են և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու իրավական հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 07.04.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ